

Բաց նամակ
ՀՀ բնապահպանության նախարար Ա. Գրիգորյանին

Ինտերնետային կայքերից հանկարծակի տեղեկանալով, որ բնապահպանության նախարարի կողմից 30 հունիսի, 2014 թ.-ին տրվել է փորձաքննական դրական եզրակացություն «Մեզո Գոլդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի հանքավայրի նոր պոչամբարի նախագծին ապրեցինք խիստ հիասթափություն ու խորը վրդովմունք:

Ցավով փաստում ենք, որ մեր՝ Մելիքցյուղ համայնքի բնակիչների կենսական շահերի պաշտպանության ծանր բեռը ստանձնած հասարակական կազմակերպություններին բնապահպանության նախարարության կողմից 15.05.2014թ. թիվ5/12.1/51257 գրությամբ տրված պատասխանից (մեջբերում ենք «<28.03.2014թ. ՀՀ Արագածոտնի մարզի Մելիքցյուղ համայնքում տեղի են ունեցել լիազորված անձերի մասնագիտական եզրակացությունների, ազդակիր համայնքի ղեկավարի և հասարակական կարծիքների նոր լսումներ: 28.03.2014թ. իրականացված հասարակական լսումների ժամանակ արտահայտվել են մտահոգություններ՝ կապված առկա երկու պոչամբարների անմխիթար վիճակի, պոչամբարի և ոսկու հանքավայրի, ինչպես նաև հարստացուցիչ ֆաբրիկայի նախագծերը համատեղ փորձաքննության ներկայացնելու անհրաժեշտության, գյուղատնտեսական նշանակության հողերը պոչամբարի կառուցման համար հատկացնելու, տարածքի սեյսմիկ ակտիվության, ջրային ռեսուրսների որակի շարունակական վատացման, ձեռնարկողի կողմից համայնքում սոցիալական ծրագրեր չիրականացնելու, համայնքի հանդեպ ունեցած ֆինանսական պարտականությունների չկատարման և այլնի հետ:>>) պարզ երևում է, որ նախարարությունը տեղեկացված էր նախատեսվող պոչամբարի կառուցման հետ կապված իրական խնդիրների ու վտանգների, հասարակական և մասնագիտական կարծիքների մասին, սակայն խախտելով ՀՀ օրենքները («Շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի համաձայն լիազորված մարմնի կողմից հասարակական լսումներից հետո **20-օրյա ժամկետում** կայացվում է որոշում մասնագիտական եզրակացության և **հասարակական քննարկումների արդյունքների արձանագրությունների հիման վրա** փորձաքննական եզրակացություն տալու մասին) և ուղղակի անտեսելով մի ամբողջ համայնքի բնակչության գոնե բավարար բարձր միջավայրում ապրելու սահմանադրական իրավունքը, այնուամենայնիվ, Թուխմանուկի հանքավայրի նոր պոչամբարի նախագծին տրվել է դրական եզրակացություն:

Արդեն հասկանալով, որ օրենքները գործում են միայն ի շահ «<հզորների>> և որևէ ձևով չեն պաշտպանում Հայաստանի շարքային քաղաքացիների օրինական շահերը մի ամբողջ համայնքի մատնելով կործանման անտեսում էր նաև ազգային շահերը:

Մենք՝ Մելիք գուղի բնակիչներս կոչ ենք անում ձեզ, անմիջապեղ հետ կանչել ձեր ստորագրությունը, հրահանգել տեսչական ստուգում անցկացնել հանքավայրում, գնահատել դրա ազդեցությունը կից տարածքների ու համայնքի վրա: Կարծում ենք, որպես հարկատուների իսկ գումարների հաշվին վարձատրվող պետական ծառայող Դուք՝ պրն Գրիգորյան, անհապաղ պետք է այցելեք Մելիքցյուղ

համայնք, տեղում ծանոթանաք իրավիճակի հետ և տրամադրեք մեզ՝ ՀՀ քաղաքացիներին, Ձեր մասնագիտական գնահատականը Ձեր անձնական պատասխանատվությամբ, որպես բնապահպանության նախարարի:

Համայնքի բնակիչներ՝

- Ա. Մարգարյան *[Signature]*
- Ա. Մարգարյան *[Signature]*
- Յ. Չեֆերիպյան + 6 (2 կոչ) 2 անգ.
- Չ. Չեֆերիպյան - *[Signature]*
- Ժ. Չեֆերիպյան - *[Signature]*
- Լ. Չեֆերիպյան *[Signature]*
- Ը. Չեֆերիպյան *[Signature]*
- Բ. Զեֆերիպյան *[Signature]*
- Բ. Կարապետյան 6. Տան *[Signature]*

- Գ. Կարապետյան *[Signature]*
- Ն. Կարապետյան *[Signature]*
- Ն. Կարապետյան *[Signature]*
- Լ. Կարապետյան 1 *[Signature]*
- Ն. Կարապետյան 3 *[Signature]*
- Գ. Կարապետյան *[Signature]*
- Պ. Կարապետյան *[Signature]*
- Պ. Չեֆերիպյան 5 *[Signature]*
- Կ. Չեֆերիպյան *[Signature]*
- Չ. Չեֆերիպյան *[Signature]*
- Բ. Չեֆերիպյան *[Signature]*

հարցաթուղթ Եսսիւսար

հարցաթղթանոց, որ քոչը կըստի
Բաղադրանքները պարզապէս անհրաժեշտ
Ընդհանրապէս հարցաթուղթը պէտք է ունենայ
հարկաւոր լինելու: Եւրոպայի երկրները,
որոնք չեն ունեցած այսինքն Տեղագրութեան
և Տղթիկ Թանգարանի փակակարգին հետ,
Նորթ Եւրոպայի անբաժան թանգարանները
պէտք է կանգնեն սոցիալական հարցերու
հարցաթուղթներով, քանի որ հարցաթուղթը
ընդհանրապէս:

Երկրագնդի մասին

Տեղագրութեան

Կառավարութեան